ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻՆ

2008 թ. մարտի 13–14-ը ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում տեղի ունեցավ հայ ժողովրդական մշակույթին նվիրված հանրապետական գիտական 14-րդ նստաշրջանը: Գիտաժողովը կազմակերպել էր ինստիտուտի տնօրինությունը, մասնակցում էին ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պատմության և Հայաստանի ազգագրության պետական թանգարանների ներկայացուցիչները: Նստաշրջանում ընդգրկված 45 զեկուցումները նախապես տպագրվել էին առանձին գրքով (պատասխանատու խմբագիրներ՝ Սարգիս Հարությունյան *և* Սուրեն Հոբոսյան*):*

Նստաշրջանի չորս նիստերում ներկայացված զեկուցումները վերաբերում էին ժողովրդական մշակույթի մի քանի բնագավառների՝ ավանդական և արդի ազգագրության, բանահյուսության, մարդաբանության և հարակից այլ երևույթների հիմնախնդիրներին:

Գիտական նստաշրջանը բացեց ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանը՝ *մասնակիցներին ցանկանալով բեղմնավոր աշխատանք:*

Առաջին նիստում (նիստավար՝ Համլետ Սարգսյան*) լսվեց 12 զեկուցում:* Լիլյա Վարդանյանը *«Ի. Դոլժենկոն՝ իբրև Հայաստանի ռուս ազգաբնակչության հետազոտող» (ռուս.) զեկուցման մեջ ըստ արժանվույն ներկայացրեց վերջերս վախճանված ազգագրագետ Իրինա Դոլժենկոյի գիտական վաստակն ու մարդկային նկարագիրը: «Ադրբեջանից բռնագաղթված փախստականների ժողովրդագիտական նյութերը ըստ 2007 թ. Տավուշի խմբարշավի արդյունքների» զեկուցման մեջ* Էսթեր Խեմչյանը *հետաքրքիր փաստեր բերեց իրենց պատմական բնօրրանից դուրս մղված, բռնագաղթած փախստականների մասին, որոնց շրջապատում դեռևս գոյատևող ու կենցաղավարող ժողովրդագիտական բազում նյութերը արժանի են ուշադրության, հավաքման և ուսումնասիրման: Հայերի և հույների մոտ տարածված «Յեղ ու առաջ» տեսակի պարերի համադրությամբ ու նախնական վերլուծությամբ* Նաիրա Կիլիչյանը *հայկական պարի հունական զուգահեռի միջոցով փաստեց դրանց մշակութային կապի առկայությունը:* Արա Գուլյանի *«Ազգային ինքնության կառուցվածքային մի բաղադրիչի մասին» զեկուցումը նվիրված էր Հայաստանում կրոնական փոքրամասնություններին, և բանախոսի ուշադրության կենտրոնում կրոնական այն համայնքներն ու խմբերն են, որոնք կարող են կրոնական նոր հոսանք համարվել և որոնց անդամների մեծամասնությունը հայ են: «Հասարակական վարքում սահմանների ընկալման որոշ առանձնահատկություններն արդի Հայաստանում» բանախոսությամբ* Ալինա Պողոսյանը *եզրակացրեց, որ անձի վարքն ուղղված է այն իրականությանը և սոցիալական այն տարածությանը, որի հետ ինքն իրեն նույնականացնում է: Ըստ* Ռուբեն Կարապետյանի *«Պատմական վերակազմության*

մեջ սոցիոլոգիական հետազոտության նյութերի տեղեկատվական օգտակարության գնահատման խնդիրները» զեկուցման՝ ժամանակակից բնակչությունն անցյալի մասին լուրջ և բովանդակալից լրատվության կրողն է: Երգիծական մանրապատումների՝ իբրև բանահյուսական ինքնուրույն տեսակի ձևավորման մասին էր Արմեն Սարգսյանի *«Ժողովրդական ասույթաբանության դրսևորումները երգիծական մանրապատումներում» զեկուցումը: Վահրամաբերդում պահված ձեռագիր ու տպագիր գրքերի՝ Ավետարանների, Ճաշոցների, Նարեկների վերաբերյալ առ այսօր պահվող զրույցներին էր նվիրված* Հասմիկ Գալստյանի *«Մնահավատական զրույցներ (ըստ Վահրամաբերդ գյուղի սուրբ գրքերի վերաբերյալ պատմությունների)» բանախոսությունը: Կոնֆլիկտների ակտուալացման, ինչպես նաև դրանց հաղթահարման գործում հիշողության կարևոր դերի լուսաբանմանն էր ուղղված* Արսեն Հակոբյանի *«1918 թ. իրադարձությունների հիշողությունները 1988 թ. հայ-ադրբեջանական հարաբերությունների համատեքստում (մի դեպքի օրինակով)» զեկուցումը: Սատանայի հետ դաշնակցած կեղծ բուժողի կերպարն էր քննվում* Եվա Զաքարյանի *«Սատանայի պայմանագիրը» բանախոսությունը: Ըստ համազեկուցողներ* Միհրան Գալստյանի *և* Համլետ Սարգսյանի *դիտարկումների՝ բնակչության տեղաշարժերը Տավուշի մարզի համար ունեցել են տնտեսական և սոցիալ-ժողովրդագրական բնույթի լուրջ հետևանքներ՝ խախտելով մարզի բնակչության սեռատարիքային կառուցվածքի համամասնությունը («Տավուշի մարզի բնակչության տեղաշարժերը հետխորհրդային շրջանում»): Իսկ* Սամվել Մկրտչյանի *«Վարդավառի էթնոմշակութային և սոցիալական առանձնահատկությունները Տավուշում» զեկուցման համաձայն՝ Վարդավառը տավուշցիների կենցաղում մեծավ մասամբ ընկալվում է որպես ընտանեկան-ազգակցական խնջույքային տոն:*

Երկրորդ նիստում (նիստավար՝ Թամար Հայրապետյան*) լսվեց 11 զեկուցում: Առաջինը* Ալվարդ Ղազիյանի *«Հայ ժողովրդական հեքիաթների ազգային յուրահատկությունների շուրջ» զեկուցումն էր, որտեղ բանախոսը հայ ժողովրդական հեքիաթներում յուրաքանչյուր շրջանի բնորոշ բուսակենդանական աշխարհի անվանումների, լեզվառճական յուրահատկությունների, հասարակական կյանքի այլևայլ սովորությունների վերլուծության հետ մեկտեղ՝ թագավորական իշխանության հարատևության ու հաստատունության նկատմամբ ժողովրդի իղձը մեկնաբանում է ազգային պետություն ունենալու բարձր գիտակցությամբ, ինչով էլ կարելի է բացատրել հեքիաթներում թագավորին դիմելու հիմնական բանաձևերը՝ «թագավորն ապրած կենա» և «թագավորի թախտը հաստատ կենա»:* Լևոն Աբրահամյանը *«Տրիքստեր հայտնի և անհայտ» զեկուցման մեջ քննության ենթարկեց շատ ժողովուրդների բանահյուսության մեջ հանդիպող առեղծվածային, ճարպիկ ու հնարամիտ հերոսի՝ տրիքստերի կերպարը: «Գորգը անդրաշխարհից» բանախոսությամբ* Լիլյա Ավանեսյանը *եզրակացնում է, որ ըստ նախաքրիստոնեական պատկերացումների ստորերկրյա աշխարհից տարբեր բարիքներ են գալիս, որոնցից է նաև կախարդական գորգը:* Գոհար Ստեփանյանը *«Բարեկենդանյան շրջադասությունը Աբեղաթողի ծե-*

սում» բանախոսության մեջ Աբեղաթողի ծեսը դիտարկեց Բարեկենդանի համատեքստում՝ այն համարելով նույն Բարեկենդանի մի դրսևորումը եկեղեցու ոլորտում: «Տան սուրբ» երևույթի արցախյան դրսևորումները» զեկուցման մեջ Սվետլանա Վարդանյանն *իր կողմից գրառված սկզբնաղբյուրային հավաստի տվյալներով վերահաստատում է «Տան սուրբ» երևույթի առկայությունը Արցախում:* Զորիկ Ծատուրյանի *ընկալմամբ՝ հավատալիքային համակարգում ուրույն տեղ է գրավում «Ջուրը որպես տոտեմ նախնի «Սասնա ծռեր» էպոսում:* Սվետլանա Պողոսյանի *«Կնոջ և տղամարդու խորհրդանիշները հայոց մշակույթի համակարգում (ավանդական և ժամանակակից ընկալումներ)»* Աստղիկ Իսրայելյանի *«Քթի օղեր» զեկուցման մեջ քննվեցին ավանդական ազգագրական որոշ երևույթների դրսևորումները մեր օրերում: «Եղիշե Չարենցի քնարերգության առասպելաբանական ակունքները» բանախոսության մեջ* Թամար Հայրապետյանը *բացահայտեց հին աշխարհի, հայոց, հունական և հնդկական դիցաբանության այն դիպաշարերն ու պատկերացումները, առասպելաբանական-բանահյուսական խորհրդանիշները, որոնց անդրադարձել է Ե. Չարենցը թեմատիկ, ժանրային, լեզվաարտահայտչական ու տաղաչափական նորանոր ձևերի, բանաստեղծական տարբեր համակարգերի որոնումների մեջ: Վերջին տասնամյակում Հայ առաքելական եկեղեցու ձեռնարկած մարտավարական քայլերին անդրադարձավ* Յուլիա Անտոնյանը՝ *«Քահանան մտնում է գյուղ. առաքելական եկեղեցու վերահաստատման արդի գործընթացների որոշ ասպեկտներ» զեկուցմամբ:* Կարինե Նալբանդյանի, Աննա Փալիկյանի, Նվարդ Քոչարի *հույժ մասնագիտական «Ասորիների ռեգիոնալ ուսումնասիրությունը՝ մաշկաբանության և ատամնագիտության տվյալների հիման վրա» (ռուս.) զեկուցումը նվիրված էր գտածոների մարդաբանական քննությանը:*

Երրորդ և չորրորդ նիստերում նույնպես լսվեցին 11-ական զեկուցում (նիստավարներ՝ Հարություն Մարության *և* Միհրան Գալստյան*): Ժողովրդագրական ազգագրությանն էին նվիրված* Աղասի Թադևոսյանի *«Սոցիոնորմատիվ մշակույթի որոշ դրվագների փոխակերպումները Հայաստանի Հանրապետությունում 1997–2007 թթ.», համահեղինակներ՝* Մխիթար Գաբրիելյանի *և* Արտակ Դաբաղյանի *«Վերաբնակության ազգագրական առումների ուսումնասիրությունը»,* Ռուբեն Օհանջանյանի *«Գեղարվեստական մշակույթի սպառման փոփոխությունները ՀՀ-ում (ըստ Տավուշի մարզի նյութերի)» զեկուցումները:* Արմենուհի Ստեփանյանի *«Իրանահայերի ներգաղթը 1946–47 թթ.», Լիանա Քևնակսզյանի «Կրոնային գիտակցության փոփոխությունների ազդեցությունը հայոց մշակութային համալիրների և ենթահամալիրների վրա» զեկուցումները պատրաստված էին հեղինակների կատարած հարցախույզների տվյալների հիման վրա:* Լիլիթ Սիմոնյանը *«Տմարի և տոմարային երգերի հետքերը հայ հմայական և ժողովրդական աղոթքներում» բանախոսության մեջ, Ս. Հարությունյանի «Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ» գրքում զետեղված նյութերի հիման վրա, նոր լույս է սփռում հատկապես Ծննդյան ավետիսների և ս. Սարգսին նվիրված երգերի քննության վրա: Ազգագրական և բանահյուսական նյու-*

թերում պահպանված հնագույն մի շարք պատկերացումների, ծեսերի, սովորությունների լուսաբանմանն էին նվիրված Գայանե Շագոյանի *«Հարսանիքն իբրև հայ ինքնության խորհրդանիշ և հայ ինքնության խորհրդանիշները հայոց հարսանիքներում»,* Ռաֆիկ Նահապետյանի *«Նորածնի մկրտությունը որպես նրա հասարակական ճանաչման փուլ»,* Լուսինե Խաչատրյանի *«Մազրդու Սուրբ օջախ»,* Ն. Վարդանյանի *«Մսե հմայիլի մոտիվը հայ բանահյուսության մեջ»,* Սարգիս Մխիթարյանի *«Տիգրան Մեծը վիպական բանահյուսության մեջ»,* Ռաիսա Խաչատրյանի *«Մարիամ Աստվածածնի կերպարը հայ ձոներգային բանահյուսության մեջ»,* Գոհար Ղարագյոզյանի *«Բանահյուսական սյուժեների հարցը Հեթում Պատմիչի Flor des Estoires de la Teme d'Orient» աշխատության մեջ (ռուս.),* Լիլիթ Մկրտումյանի *«Բանահյուսական նյութերի գրառումներ Տավուշի մարզում» զեկուցումները: Հ. Թումանյանն իր ստեղծագործություններում արտացոլել է հայ ժողովրդի նիստուկացը, սովորությունները, հավատալիքներն ու ծեսերը, ինչի մասին է վկայում* Հասմիկ Հարությունյանի *«Անուշ» պոեմը Համբարձման տոնի ազգագրական սկզբնաղբյուր» բանախոսությունը:* Վիգեն Ծատրյանը *«Խալդի և Ուարուբաինի դիցանունների ստուգաբանության փորձ» զեկուցման մեջ Վանի թագավորության պատմության, պետության էթնիկական կազմի և միջցեղային փոխհարաբերությունների լուսաբանման տեսանկյունից կարևորեց հատուկ անունների ուսումնասիրությունը: Գյուղերի հուշարձանամերձ տարածքներում մաքրության գործը բարոյախրատական ոլորտից բիզնեսի դաշտ տեղափոխելու հարցն էր բարձրացված* Հարություն Մարությանի *«Մաքրության խնդիրները և մշակութային ու բնության հուշարձանների կարգավիճակի ընկալման հարցը հայաստանյան գյուղերում (ըստ Տաթև և Գոշ գյուղերի նյութերի)» զեկուցման մեջ: Իսկ* Նիկոլ Մարգարյանի *«Սպասարկման ոլորտի ձեռնարկությունների ներկայացուցչական անվանումները (ըստ Գյումրիի և Իջևանի նյութերի)» բանախոսությունը քննարկման առարկա է դարձնում հայրենական գործարարների միջավայրում անվանումների հաջող ընտրության և սպառողների թվաճի հարաբերակցությունը:*

Ամերիկահայոց ժողովրդական բանահյուսության նշխարների, Հայոց ցեղասպանության հուշապատումների, համայնքային կյանքի նիստուկացի և օտար միջավայրում ներազդեցությունների մասին էր Վերժինե Սվազլյանի *«Ժողովրդագիտական դիտարկումներ ԱՄՆ-ի հայ համայնքում (ըստ 1979, 1990 և 2001 թթ. ուղևորությունների)» զեկուցումը: «Ներընտանեկան հարաբերությունները Շիրակում (XX դարի կեսեր)» բանախոսությամբ* Կարլ Սեղբոսյանը *բացահայտում է կենցաղի տարբեր ոլորտներում տեղի ունեցած փոփոխությունների ներազդեցությունն արդեն ձևավորված սովորությունների վրա: Միջազգային խոլերայի համաճարակի հայաստանյան արձագանքների մասին էր վկայում արձանագրությունների վերծանությունը, ինչը ներկայացվեց* Աշոտ Մանուչարյանի *«Վիմագիր հիշատակություններ խոլերայի համաճարակի մասին» զեկուցմամբ:*

Նստաշրջանի վերջին՝ Սուրեն Հոբոսյանի *«Խաղողագործության ավանդական եղանակները Մեղրիում» զեկուցումը նվիրված էր Սյունիքի մարզի հարավում գտնվող Մեղրու տարածաշրջանին, որտեղ կլիմայական բարենպաստ պայմանները խթանել են պտղաբուծության և հատկապես խաղողագործության զարգացմանը:*

Նստաշրջանի վերջում տեղի ունեցավ մտքերի փոխանակություն: Ելույթներ ունեցան Ս. Հոբոսյանը, Հ. Մարությանը, Հ. Խառատյանը*:*

Ամփոփելով գիտաժողովի արդյունքները՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ս. Հարությունյանը, *ըստ արժանվույն գնահատելով ներկայացված զեկուցումները, առաջարկեց գիտնականներին մտահոգող հիմնախնդիրների շուրջ առաջիկայում կազմակերպել գիտական սեմինարներ և կյանքի կոչել մտքերի փոխանակության «կլոր սեղանների» ավանդույթը:*

ԹԱՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ